




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԵՐԻՏ ՊՐՈԼԵՏ ԳՐՈՂՆԵՐ

ԽԱՉԻԿ ՀԲԱՉՅԱՆ

ՄԿԱՆՆԵՐԻ
ԼԻՐԻԿԱՆ



891.99

Հ - 94

1931 ՅԵՐԵՎԱՆ

ԽԱԶԻԿ ՀՐԱՉՅԱՆ

391.99

26 NOV 2011

Հ-94

my.

ՄԿԱՆՆԵՐԻ ԼԻՐԻԿԱՆ

61
37

888
1788

ՊԵՏԶՈՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ



Պետերատի տպարան
Գլավ. № 6608 (ք)
Հրատ. № 1698
Պատ. № 3313
Տիր. 4.000



Մ Ե Ն Ք

Մեր մկանները պիրկ են, ձիգ են,
Մեր կամքն անթեք է ու կռու ու թեթ.
Բայց ուր է, ուր է այն վրձինը,
Վոր բորբոքի մեր յեռանդն հրկեզ...

Մենք հազարներ ենք, մենք անթիվ ենք,
Մենք միլլիոններ ենք մղում գործի.
Մեր նոր կորոզի ու յեռանդը մեր
Մենք ստանում ենք կյանքի փորձից...

Մենք գրավել ենք դիրքեր անթիվ
Յեվ գիգանտներ ենք կանգնել արդեն,
Զոհեր ենք տվել, անթիվ մարտիկ,
Ու միշտ հաղթել ենք, ու միշտ հաղթել...

Յեվ ամեն քարը, վոր դրվել է
Ու բարձրացել են պատերն հսկա,
Նորից լեռանդը մեր սրել են,
Նորից մարտի յեն հրել անկանդ...

Յեւ զբոհել ենք նորից խանդով,
Յեւ հարվածել ենք կրկին, կրկին.
Ու մեր գրոհից, մարտից անդու
Ծխնելու զգներ են հառնել յերկինք...

Յեւ այդ պայքարի, մարտի ժամին.
Յերբ համառել ե, սրվել մեր դեմ
Դասակարգւիւն մեր թշնամին՝
Դուք նահանջել եք, սիմուլյանտներ...

Դուք տատանուել եք, հետ եք կանգնել,
«Հոգնել» եք դժվար աշխատանքից,
Աշխատել եք մեր անմպը բանտել,
Բուժներ եք նետել դուք մեր վաղըին...

Բայց մենք հարթել ենք ուղին անհարթ
Յեւ զբոհել ենք նորից, կրկին —
Հայացքները մեր վստահ, անթարթ
Հառած զեկավար այն պիրի ձեռքին,
Վոր զեկավարն է մեր մեծ նավի...

Նա, վոր պայքարի աջն վիհ ժամին
Ղեկավարեց մեր նալն անթեք
Մինչև հաղթական նավահանգիստ...

Նա, վոր բյուր, անթիվ թումբեր հարթեց,
Ճակատեց ցրտի ու քաղցի դեմ —
Մինչև վոր նալը մեր անհանդիստ
Հաղթական կայանն իր — նավեց...

...Ու լինում ենք մենք ահա նորից,
Վորպես յերկաթե հորդ մի հեղեղ.
Յեւ մեր ընթացքը շոնդալից
Վճռ մի անբարտալ չի, չի շեղի...

Վճռ մի դասալիք ու սիմուլյանտ
Ձի կարող մեր կուռ կամքը քանդել —
Դանի մեզ հետ են բյուր միլիոնե կամք,
Մեր ղեկավարն է Վ. Կ. Պ. (Բ) — են...

30 թ.

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԱՅԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Ударим, ударим, ударим,
Примером ударных бригад...

А. Жаров

1.

Դառնում ե, դառնում ե, դառնում ե,
Դառնում ե թափանիվը թափով.
Մենք ձուլված անիվին հառնում ենք,
Դառնում ենք, դառնում ենք, դառնում...

Հեյ, խանդով յեռանդով հարվածենք,
Արշավենք միշտ վստահ, միշտ հաստատ,
Մեր յեռանդը թող թեժ հարվածի
Նրանց, վոր անկար են, անկամք...

Դառնում ե, դառնում ե, դառնում ե,
Դառնում ե թափանիվը թափով.
Մենք ձուլված անիվին՝ հառնում ենք,
Դառնում ենք, դառնում ենք, դառնում...

2.

Մեր կամքը դարձդարձիկ թափանիվ
Թող դառնա անդիջում յեռանդով,
Վոր փոկը սլանա, թափ առնի,
Դինամը յեռանդից հռնդա...

Մկանները հիմա լարված են,
Հեյ, առաջ, գրավենք դիրքերը.
Հարվածենք, հարվածենք, հարվածենք,
Թող իջնեն յերկաթե ձեռքերը...

Թող հնչի բարձրաձայն ղչակը,
Վորոտան թող անիվները հուժկու,
Մենք կյանքի բարձրացող ուիչագը
Նոր կյանքի տիրական համերգում...

Մկանները հիմա լարված են,
Հեյ, առաջ, գրավենք դիրքերը.
Հարվածենք, հարվածենք, հարվածենք,
Թող իջնեն յերկաթե ձեռքերը...

Մեր հարվածը հիմա հատու յե.
Արշավում ենք հզոր, աննկուն,
Արշավում մեր աչդ հաղթ դատում ենք,
Զատում ենք արգելքը, դուրս նետում...

Մկանները հիմա լարված են,
Հեյ, առաջ, գրավենք դիրքերը.
Հարվածենք, հարվածենք, հարվածենք,
Թող իջնեն յերկաթե ձեռքերը...

80 Բ.

ՎԵՐԵԼՔ

Մեր դաշտերում ինչքան վարդեր,
Ու լալաներ՝ բորբ, գույնզգույն.
Վոսկենման գեղին արտեր,
Խնդուն սրտեր՝ վորպես Զանգուն

Մեր դաշտերում չեռուն հուլիներ
Ու մկաններ՝ պիրկ ու ջլուտ.
Անվերջ չեռանդ, ծիծաղ ու սեր,
Շոգեծիեր՝ կամքին հլու...

Ու վորպես լույսն ելեկտրոլամպի
Լուսավառվող սև խավարում,—
Իշխող շունչը սև չեբկաթի—
Յերկաթավառ մեր դաշտերում...

29 Բ. մայիս.

ՄԱՐՏԸ

Դղրդում ե հանքը խորքից,
պատերը դողում են, նալիր,
Ինչքան ել հողը ցած սահի՝
Ձի ընկնի մուրճը պիրկ ձեռքից...
Թնդում ե հանքը գոռ չերգից,
Գործում են ու յերգում, նալիր,
Ձի ընկնի մուրճը պիրկ ձեռքից՝
Ինչքան ել հող ցած սահի...

Լարվիլ են մկանները գործող.
Մուրճերը իջնում են հաստատ.
Դեմքերը համառ են, վստահ,
Դեմքերը բրոնզ են, ու բոց:
Ինչքան շատ հարված ու տնքոց՝
Այնքան շատ հաղթանակն ուզած.
Լարվիլ են մկանները գործող.
Մուրճերը իջնում են հաստատ...

Ինչքան ել պղինձը համառի,—
Գիտեն, վոր պիտ հաղթեն իրենք.
Թող պղինձը կողքերը սրե՝
Մուրճերը յերբեք չեն սառի...

Իջնում են մուրճերը, նալիր—
Ու յերգում հաղթութիւն մի յերգ.
Ինչքան ել պղինձը համառի,—
Գիտեն, վոր պիտ հաղթեն իրենք...

30 թ.

* *

Քեռ յերեկ ինչքան խինդ ու ծիծաղ կար,
Ինչքան հորդառատ ժպիտ դեռ յերեկ.
Քանի դույզ ձեռքեր ու քանի մկան
Գործում ելին բորբ, աշխուժ դեռ յերեկ...

Բայց այսոր ինչքան խինդ ու ծիծաղ կա,
Ինչքան ժպիտ կա՝ առատ քանց յերեկ.
Ինչքան ձեռքեր կան, ինչքան մկան կա,
Ինչքան լեռանդ կա՝ առատ քանց յերեկ...

39 թ. հունիս

ՀՈՒՅՁԵՐ

Յերկիր իմ, չերկիր իմ Հոկտեմբերի
Փռվել ես անծայր ու ափից ափ
Յեւ չհարթութուններ ունես բերրի
Ու բարձրութուններ չերկնասլաց...

Գյուղեր, ավաններ ունես դեռ գորշ,
Հյուղեր գորշագույն խոնավապատ.
Յեւ անծայր դաշտեր՝ ջրի կարոտ,
Դաշտեր պապակած, վունց անապատ:

Անտառներ ունես խիտ ու վայրի,
Լեռնաշղթաներ, կիրճեր անանց...
Յերկիր իմ, չերկիր իմ Հոկտեմբերի
Փռվել ես անծայր ու ափից ափ...

...Յերկաթն ե արշավում արագաթև
Կուսական, վալրի անտառներով.
Ռելսերը բարակ, յերկար ու սև
Սողում են լեռան գորշ փեշերով...

Կանաչն ե թռչում շոգ հեքից,
Յեւ աղնածությամբ կծկում թերթեր.
Գալլեր, գաղաններ չերկաթ-ձեռքից
Փախչում թագնվում են հեռուներ...

Պողպատ փողերն են դռն աղմկում,
Թափանիվներ են դառնում անդուլ,
Յերկաթազրահ քո նոր գրկում
Մի նոր աշխարհ ե յերկնում կանգուն...

Դո «գիծ» գետերը արագահոս
Հիմա դարձել են լուրջ ու խոհուն.
—Մեր բազուկները ստեղծագործ
Տվել են նրանց նոր ձև, նոր հուն...

Նրանց սրնթաց վաղքից հիմա
Դառնում են անթիվ թափանիվներ
Յեւ քո ժպտացող աչքի զիմաց
Գործում ենք համառ, գործում ենք դեռ ..

.. կիրճերն են թնդում ահագնազդուդ,
Դինամիտներն են հաղթ վորոտում...
(...Դեռ ինչքան դաշտեր՝ շոգու կարոտ,
Ինչքան գյուղեր կան՝ նեղ վոլորտում...)

Մտել ենք արդեն ձորերը քո,
Գանդում ենք կուրծքը քո լեռների
Յեւ մեր պողպատյա մուրճի ներքո
Ժայռերն են նահանջում հաղթ, ամենի...

Յեւ ջրանցքներն են յերգում տենդով,
Անցնում դաշտերով քո պապակած
Գորշ հողն ե ծծում բարկ լեռանդով
Գլգլան ջուրը՝ վաղ չերագած...

Յեւ ծլում, աճում են քո արգանդից
Ծաղիկներ, վարդեր, արտեր կանաչ.
Յերգում են կլանքը վառ, անթախիծ,
Յերգում ե հուշով հրակարկաչ...

...Յերկաթավորվող լերկեր իմ ար,
Դեռ պիտի հերգես չերգդ հումկու,
Դեռ պիտի փռվես դու ափից ափ
Մոսկվայից—Լոնդոն—Սան-Ֆրանցիսկո...

Ու պիտի լինես տենդոտ թափով
Արև՝ իմ, արև՝ իմ խորհրդային,—
Յեւ Ատլանտյանի կապույտ ափով
Հաղորդես լույսդ վողջ աշխարհին...

Դեռ պիտի լերգես վորպես մրբիկ,
Հին աշխարհին տաս մահ ու սարսափ. —
Յերկի՛ր իմ, յերկի՛ր իմ Հոկտեմբերի,
Պիտ փռվես անծայր ու ափից-ափ...

29 Բ.

* * *

ՌԱՅԻԿԻՆ

Կապուտաչյա մանուկ, չարաճճի տղա
Կայտուում ես անհոգ լուսապայծառ դեմքով—
Դու ծնվել ես անհոգ և արևի ծնծղան
Գուրգուրել ե քեզ միշտ հոկտեմբերյան լերգով...

Դո լուսեղեն դեմքին, քո աչքերին ծավի
Ձի նստել դեռ լերբեք մաշող վնչ մի թախիծ.
Դու աճել ես անվիշտ, անհաղորդ խոր ցավի
Յեւ մարմինդ կայտառ չի կծկվել վախից...

Վորքան սիրելի լեն ինձ հայացքդ աղու
Յեւ ժպիտդ լուսե, խոր ու տենդրական.
— Այդ արևն ե դեմքիդ իր լույս-փռչին մաղում,
Թե կրակն ե ներսիդ, վոր վառվում ե անկանգ...

Աճիւր դու անկաշկանդ. թող ձեռքերդ կաթի
Ամբանան ու դառնան ամրամկան բաղուկ.
(Գիտե՞ս թե ինչքան ենք թեք ուղիներ հարթել,
Վոր արեւը խաղա աչքերումդ լաղուր...

Կապուտաչյա տղա, Հոկտեմբերի մանուկ,
Մեր վառ ապագայի դու աննկուն հերոս
Դու հասակ ես առնում արդեն ու մեծանում,
Ահա, նվեր աճիւղ—փրկելու...

31 թ. հունվար

1938
88X1


Ա Յ Յ

Գալիս ենք, գալիս ենք դեպ քեզ
Ո՛ր, գյուղ իմ, գյուղ իմ դարթնած.
Դեռ հեռվից կանչում ես դու մեզ
Քո ձայնով խնդուն ու անդարդ:

Գալիս ենք քաղաքից հսկա,
Գալիս ենք զավողից հրե,
Բերում ենք քեզ յերկաթ-մկան,
Բանվորի խնդազին բարե...

Անցնում ենք դաշտերով ծանոթ՝
Ուր մի որ բանակներ յեկան,
Ուր մի որ յերգում եր թնդանոթը,
Իշխում եր ուր բիրտ մի նազան...

Ուր յեկան դարերի խավարից
Վորդիները քո մերկ ու խեղճ,
Խփեցին առնամուտ տերերին.
Յե՛վ հողը անտրտում յեբգեց...



Մնացնում ենք դաշտերով կանաչ՝
Ուր մի ուր բանականեր լեւան ..
Մեր դեմ փռվել են ահա
Կոլլեկտիվ հանդերձ անափ..

Գալիս ենք, գալիս ենք դեպ քեզ,
Ո՛ր, դլուղ իմ, գյուղ իմ դարթնած.
Դեռ հեռվից վողջունում ես մեզ
Դո՛ւ ձայնով խնդուն ու անդարդ...

20 Թ. ապրիլ.

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ո՛ր, մանկություն իմ, չերազ իմ անշուք,
Վոր անցար կապույտ գիշերում աղոտ.
Դեռ չերևում ես անփայլ մշուշում,
Դեռ ապրում ես դու հուշերում իմ վերք...

*
* *

Փռվել եր դաշտում դեղին մի աշուն,
Ցած ելին թափվում տերևներն անդորր
Բամին վռնում եր ինչպես ծեր մի շուն,
Լիզում պատերը, քրքշում խանդով...

Ու նեղ չերդիկում վողբում եր նա մերթ,
Հեկեկում մռալ առաստաղի տակ...
— Ա՛խ, ինչո՞ւ աչքան ցուրտ ե տունը մեր,
Մըսում եյի յես, ա՛խ, այնքան, այնքան...

Յեվ ճշում եյի ցրտից խելագար:
Գալարվում եյի, հեկեկում, լալիս,
Մայր ինձ շույում եր ձեռքերով տկար,
Կծում շուրթերը ներքին խոր ցավից...

Իսկ նրա դեմքը... հազիվ հիշում եմ.
Չորցած ու դեղնած, անփայլ աչքերով...
...Դրսում անձրև կար, դրսում աշուն եր,
Մռայլ ու ամպոտ, ցուրտ ու անդորով...

— Ա՛խ, ինչո՞ւ մայրս ինձ գրկած՝ վորք ե,
Ինչո՞ւ չե անվերջ տխուր «ա՛խ» քաշում...
...Դրսում անձրևը թափվում եր, հորդ եր,
Դրսում վռնում եր մոռացված մի շուն...

...Ո՛ր, մանկության իմ միգապատ գիշեր,
Վոր տըրտվում ես որերի վազքում—
Գեղնում տեսնում եմ լոկ միայն փշեր,
Լոկ միայն տանջանք, լոկ միայն արցունք...

* * *

Յե՛վ կտրում եմ յես վերջին թելն ահա,
Վոր կապում ե ինձ, մանկություն իմ, քեզ...
Ու խինդ, ու յերգս, վոր ունեմ պահած—
Նետում եմ ահա պաշարի հանդես...

...Սիրաս զարկում ե տենդազին թափով
Յե՛վ հզոր մի շունչ եյությունս մըրկում...
Ուղում եմ ճչալ, քրթջող խանդով,
Ուղում եմ ալրվել որերի գրկում...

Ուղում եմ ձուլվել որերի վազքին,
Ուղում եմ լինել կառուցման մի քար,
Վոր սիրտս թնդա որերի զարկից,
Վոր սիրտս լինի կառուցման քնար...

30 թ.

ՄԱՅԻՍՅԱՆ ՀՈՒՇ

1

Ինչքան ե անց կացել այն արնավառ որից...
Լսում եմ չես հեռո՞ւ մի աղաղակ.
Ու հիշում եմ հստակ, հիշում եմ քեզ նորից
Հերոսական քաղաք, հերոսական քաղաք,

* * *

Տեսա չես մարտն այն հերոսական ու վեհ
Յե՛վ բանակները այն չերկաթապատ ու դուռ
Վորոնք անցնում ելին ինչպես լափող հրդեհ,
Վորոնք անցնում ելին հերոսական չերդով:

Տեսա արնակարմիր գրոշ ծվեն-ծվեն,
Տեսա արյամբ հարբած ցինիկ, գորշ մի մոռեթ
Յե՛վ մալթերի վրա մահաժպիտ սրեր,
Ու լճացած արյուն, ու լճացած արյուն...

Յե՛վ այրուն մեջ ընկած տեսա մեռած մի մարդ
Աչքերը հեգնանքով դեպի չերկինք հառած...
Նա չեր, նա չեր, նա չեր, հերոս մարտիկն եր այն,
Վոր ընկել եր հալարտ, ընկել գիրքի վրա...

Նոյեմբերյան մի առավոտ նրանք լեւան,
Արշավեցին, ու լերգեցին, ու լերգեցին.
Նրանք յեւան, վորպես մրրիկ. վորպես սեւալ,
— Ժպտում եր հաղթ ալ մի արե—արեածին...

Ու հոնդաց դաշտի վրա ծանոթ մի յերգ,
Թրթռալով տարածեց իր թևերը հաղթ.
— Ո՛ր, մայիսյան արնակարմիր, հալարտ դու վերք,
Վոր հարթեցիր ճանապարհ մի վեհ ու պայծառ...

80 Թ. մայիս

Ե Ր Ա

(Հատված)

Այս դաշտերի փոշոտ, կեռման ճամբաներով,
Վորով տրակտորն է անցնում հիմա հսկա—
Անց են կացել մի որ մաշված տրեխներով
Չարքաշ մի գյուղացի ու մի սայլ...

Դաշտերը այս կանաչ տենչացել են ջրի
Յեւ լարտերը կծղած առալից են խշշացել,
Հողի մարդն է լացել ու աղոթել լռին,
Սակայն վրչ մի աստված չի գթացել...

Համարձակ շաչել է այստեղ բիրտ մի դամիչ,
Դալարվել է մարմին մի խոր կսկիծից.
Յեւ ինչպես սոված շունը կլանչի՝
Չանգերն են զողանջել տրամաթախիծ...

Յեւ հնչել է բարձր ցինիկ, սուր մի ծիծաղ
Իշխողներն են հրձվել գրկում տուփանքի.
Կռացել է չարաչք, գիշակեր մի ագռավ,
Ու լացել են ցավից անթիվ կին...

2

Այս դաշտերից անդին, հեքլաթի պես հեռու
Իշխել է քաղաքը գոռ, ժանտադեմ.
Ու հայացքը անհագ դեպ հողը սեռուն՝
Յերազել է անվերջ քանդել, քանդել...

Յեւ վարդել ե ձեռքը խրճիթներին քստտա,
Դուրս ե կտրղել հիվանդ ու մարդ, ու չերեխտ,
Յեւ վորպես մի դաժան ու արնախում վոսոխ՝
Կլանել ե անվերջ լայն չերախը...

Կլանել ե անթիվ ու տանջել ե անվերջ,
Քամել ե վողջ հյուսթը, ալ արյունը վողջ.
Յեւ չերս սպառվել ե յեռանդը նրանց մեջ՝
Իրտ քրքիջով դուրս ե նետել փողոց...

Ու քաղաքում, գյուղում, աշխարհներում ամեն
Դրտինքն անարգվել ե անարգ.
Յեւ քաղաքի, գյուղի վողջ հուլթերն ե քամել
Արնախում ու ժանտ մի դասակարգ...

Բարձրացել են անթիվ տներ մոսլաղեն,
Ու տերերը քեֆ են քաշել վայրի.
Իսկ հեռեւ խրճիթում չերեխտ ե լացել.
— Մարե, հուր ե հայրիկը...

Իսկ այդ պահին հայրը ցեխաթավալ ու խեղճ
Փողոցներին խոնավ մալթերն ե մաշել...
...Ո՛վ ե հեկեկացել այստեղ քար մթնան մեջ,
Ո՛վ ե հեռեւ, հեռեւ տնակն հիշել...

3

...Ու ծառացավ մի որ ցասումը մեր հրե
Քաղաքներից մինչև տալգաները հեռու,
Յեւ հրդեհեց աշխարհն, վորպես կիզիչ արե,
Ու արեեց հեռեւ ամերում...

...Յեւ քանակներ չեւան քաղաքներից հեռու,
Ու գյուղերից խզուկ, դեղնափողի, անդեմ.
Յեւան վորպես ալիք, յեւան վորպես սամում,
Յեւան ժանտատեսիլ հինը քանդեն...

Ահեղ կռիվ յեղավ. իրար հոշոտեցին,
Ալ արյունը հոսեց առու, առու, առու.
Անթաղ դիակները դաշտերը ծածկեցին,
Բայց հողը կարծես չեր կշտանում...

...Դրոհ տվին ցասկոտ բանվորն ու գյուղացին
Ծնվող դասակարգի ատելությամբ զինված.
Անհողող ու վճռական առաջ արշավեցին,
Ու հինն, արյունակալ հինը ընկավ...

4

Քաղաքները շքեղ, ու գյուղերը խզուկ
Ծխում ելին վորպես մարած կերոններ.
Փլած պատերի տակ քաղցն եր արշավում,
Ու համարձակ ճանկերը մեկնում ամեն տեղ...

Յեւ դաշտերը բերրի թախծում ելին լուխ,
Արեգակն եր լիզում փեշերը լեռների.
Մլանում եր անթե անհյուրընկալ քամին,
Համբուրում քրքիջով գալարվող վորբերին...

Յեւ քաղցը, քաղցը, քաղցը վորպես հրե
Արշավում եր արագ ամեն տեղ անհարցում.
Հավում ելին ձայներ. «Տեր, դու մեզ փրկես...»
Սակայն «տերը», «տերը» չեր փրկում

Յեւ ընտանիքներ յեւան, յեւան, յեւան, յեւան՝
 Ճակատելու սովի, ծարավի դեմ,
 Յեւան փրփրակալած, վորպես հորդ մի սելավ,
 Վորպեսզի նոր կշանքի ուղիները հարթեն...

Պայքարեցին ամիս, պայքարեցին տարի,
 Պայքարեցին համառ ու անհաճանջ,
 Պայքարեցին հպարտ, պայքարեցին արի
 Ու հաղթանակած—անցան առաջ...

Գործարաններն ավեր դղրդացին նորից,
 Ու շէնքերն անթիվ համերգեցին ուժեղ.
 Զբանքները կապույտ անցան սարից, ձորից.
 Յեւ վողոկեցին դաշտերն հրկեղ...

Ու տարիներն անցան, անցան թեթև-թեթև,
 Գլորվեցին մեր վառ զարուհներն անկանդ.
 Յեւ լերկիր իմ, լերար, յերար դու լերկաթե,
 Ու կանգնեցիր հպարտ դիրքերի վրա...

29 թ.

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՑԵՐԹ

ՎԱՐԴԱՆՑԱՆ ՎԱՍԻԼԻՆ

1.

Շտապում ես տուն գործարանից;
 Ծանոթ շենքերն են քեզ վողջունում.
 Զբոսնող մարդիկ և ծառերն իսկ
 Ասես ժպտում են, աչքով անում:

Աչքերիդ խորքում ինչ վոր պայծառ
 Ու ահեղրական խինդ ե նստել.
 Այնքան դժվար ե խինդը զսպել,
 Այնքան դժվար ե թագցնել ախ:

Յեւ ինչո՞ւ, ինչո՞ւ զսպել խինդը,
 Ինչո՞ւ թագցնել ախ ուրիշից...
 Թող սիրտը այդպես ուրիշով թնդա
 Յեւ անզսպելի խինդը հուշի:

Թող աշխատանքի ըլլոր մարդիկ—
 Իբ ընկերները—թող իմանան,
 Վոր իր զավոդը հնգամյակի
 Յերկրորդ տարվա արտփինպլանը

Կատարել ե ճիշտ, առանց ճեղքվածք:
Վոր լերբորդ տարվա պլաններին
Դիմալորել ե վեհ, սրտաբաց,
Յեվ առանց պակսորդ, ե անթերի:

2.

Տուն ես շտապում գործարանից,
Յեվ նույն խոհերն են քո մեջ նստած.
Զբոսնող մարդիկ ե ծառերն իսկ
Ասես ժպտում են ջինջ ու հստակ:

Յերակներիդ մեջ բոբբ ու վարար
Խփում ե արյունն—ասես հեղեղ—
Այնքան թափով ու այնքան արագ,
Այնքան տենդոտ ու անկանգ ու թեփ:

Յեվ սիրտդ վորպես նժուլդ մի ձի
Դուրսում ե հալարտ կրծքիդ պատին.
— Չե՞ վոր մալխայան տարեղարձից
Անցել եք արդեն անընդհատի:

Քայլում ես այնքան թեթևորեն,
Այնքան աշխուժ ու այնքան ուրախ.
Շուրջդ լավում են անթիվ ձայներ,
Անթիվ քրքիջներ, խինդ ու ծիծաղ:

Յեվ ներքին ամբողջ ելուժյամբդ
Համակվում ես մի անդուստլ խինդով...
— Ե՛լ, վորքան լավ ե աշխատանքը,
Վորքան անդուստլ ե սիրտը թնդում...

Տուն ես շտապում գործարանից,
Վոնց Սեթը կասեր. «Փքված նարկում»...
Զբոսնող մարդիկ ե ծառերն իսկ
Ասես ժպտում են ու ակնարկում:

Յեվ ներքին մի պարզ հալարտություն
Բարձրանում ե վեր կրծքիդ տակից.
Յերբորդ դեկադն ե արդեն դառնում
Ինչ բարձրացել ես ձեր տախտակին:

Հիշում ես. այսոր առավոտյան
Յերբ մտար տեղում պարզ ու վորբոջ
«Տեղիում» Ալեքսին նայեց կողքանց
Յեվ ասաց ուրախ. «Սերո, դայո՞ջ»...

Իսկ դու ժպտացիր շատ հասարակ...
Ամեն ինչ պարզ եր ակնարկումից.
Վաղվանից պիտի անցնել առաջ,
Վաղվանից դուրս գալ պիտ շտուրմի:
Դրա համար ե դեմքդ ժպտում,
Դրա համար ե շուրջդ ուրախ,
Ասես ամեն մի ակնթարթում
Փոխվում են շուրջդ ու ծառ ու մարդ...

4.

Տուն ես շտապում գործարանից,
Ծանոթ շինքերն են քեզ վողջունում.
Զբոսնող մարդիկ ե ծառերն իսկ
Ասես ժպտում են, աչքով անում:
Շուրջդ դարուն ե. բարկ քրքիջով
Արևիլն ե սահում շինքի ուսից,
Շողերն անցնում են մորթի միջով,
Հրում արյունը՝ «արագ հոսիր»...

Յեվ յերակներդ զրգռումից
Նորից ուռչում են, թափով զարկում.
Սրտդ խփում է, խփում ուժգին,
Ասես մուրճերն են յերկաթ թակում...

Յեվ անզսպելի մի նոր լեռանդ
Հոսում է մարմնիդ լեռակներով.
Ներսում սկսում է մի բան լեռալ,
Ինչ վոր խփում է գիրթ զարկերով:

Յեվ ներքին ամբողջ ելուքյամբդ
Համակվում ես մի անզուսպ խինդով...
— Ե՛կ վորքան լավ է տշխատանքը,
Վորքան անզուսպ է սիրտը թնդում...

31 թ. մայիս.

ԿԱՌՈՒՑՈՒՄ

1. ՄՈՒՏՔ

Քարակերտ շնքեր ու բուրգեր հողի,
Տիրորեն լինող յերկաթ, բետոն ու կիր.
— Այդ հառնում է ավերի իր անկողնից
«Հավերժորեն» մշուշ մի լերկիր:

Քարձբանում է հողից մետր առ մետր
Տուֆի ու բազալտի պատերը հաղթ.
— Այդ անցքերից ցած է հոսում ցեմենտը,
Վորպես կառուցման կաթ:

Այդ յերգում են տեմալի մկանները պիրկ,
Այդ միլլիոնների ենտուղիազմն է խոսում.
Ունկնդրի՛ր, պոյետ, այդ հաղթ լերդին,
Տես ինչպես գերում է, ինչպես հոսում...

2. ՔՐՏԻՆՔԸ

Քարակերտ պատեր. գործող մարդիկ,
Ու ցեմենտ.
Ու բետոն.
Ու կիր...
Արեգակը վե՛րից այրում է սաստիկ.
— Սոցմրցման արևային պայմանագիր:

Մուրճերը իջնում են, մուրճերը յերգում են,
Արեւը մրկում է գեմքի կաշին:
— Գործիր, վարպետ Սերո, վորպեսդի չերկրում մեր
Դառնան արագաթափ անթիվ մաշին:

Գործիր, վարպետ, գործիր.

Թող արեւ մրկի,

Ու քրտինքը հոսի առու, առու...

— Եւ, դու ենտուղիագմի, հերոսության լերկիր—
Ինչքան նոր տեմպեր ես վառում...

3. ՇԻՆ ՏՈՒՆԸ.

Փողոցը սեղմել ես քո գորշ պատերով
Հնադարյան դու տուն, պառավ, պառավ.
Այն հիվ ե, վոր համառ, հատու դարկերով
Քանդում է հիմքերդ՝ քլունդ առած:

Քո կտուրի վրա հուլիսն է նիզակել
Յեւ արեւն է վերից նետել շողերը շեկ.
Բայց մայթերիդ խոնավ վոչ մի շող չի ընկել
Առավոտից գիշեր, առավոտից գիշեր:

Յեւ դու կլանել ես քո շուրթերով զառամ
Ջերմութունը լերկրի—հողի, քարի.
Հաղարամյա դու շենք,
Ո՛ր, անատամ պառավ
Դուրս ենք լելել քո դեմ գու պայքարի...

Փողոցը սեղմել ես քո գորշ պատերով
Պառավ, հիմար պառավ,
Հնադարյան դու տուն...
Յլդ մենք ենք, վոր խրոխտ, համառ դարկերով
Քանդում ենք հիմքերդ զարկով հատու...

4. ՎԵՐՋԵՐԳ ԿԱՍ ՆԱԽԵՐԳ

Յերգում են հիմա խինդով
Անգամ հողը, անգամ քարը.
Կառուցման բարկ լեռանդով
Վարակված են հողը, քարը:

Յեւ ամեն մի վայրկյանը
Մի դար ե—չեա չ'դարձող.
Չ'դարձող մի անցյալ է,
Թեկուզ է մոտիկ անցյալ:

Ամեն մի նոր վայրկյանում
Ծալվում են անթիվ մկան.
— Ո՞վ է այդ յերգը լերկել,
Մկանի լերգն առնական...

Յերգում են հիմա խինդով
Մարդը, հողը, անգամ քարը.
Ամեն մի սահող վայրկյան
Չ'դարձող վոսկե դար ե:

30 թ. Յերկան

Ց Ա Ն Կ

	Եջ
1. Մենք	3
2. Հարվածախն բրիգադի քաղերգը	6
3. Վերելք	8
4. Մարտը	9
5. Դեռ չերեկ	11
6. Հուլիս	12
7. Կապուտաչյա մանուկ	15
8. Այց	17
9. Մանկություն	19
10. Մայիսյան հուշ	21
11. Երա (հատված)	23
12. Լիրիկական յերթ	27
13. Կառուցում	31



ՀՀ Ազգային գրադարան



NL0350136

4620 15 407.

558

40212



Х. РАЧИАН

ЛИРИКА МУСКУЛОВ

Госиздат ССР Армения
Эривань—1931

1.9.3.1